ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԲՄԱՊՁԲ-4/1-1

ք. Երևան 15.05.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ՊԱՊ ԵՎ ԹՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի առավելագույն գինը կազմում է 76 100 000 (յոթանասունվեց միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 2018թ.դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՊԱՊ ԵՎ ԹՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Մասիս, Նոր Թաղամաս, 32/16 38
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ, Մասիս մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2472900259460010
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 03809214
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ	Տնօրեն
Հ.ԱՐԱՄՅԱՆ	Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
N ՀԲՄԱՊՁԲ-4/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Անվանումը	Կատալոգային համար	Չափի միավորը	Միավորի գներ
	1.Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ Բ-10, S-170, 130)			
1	Միջադիր (պղնձյա)	40201	հատ	1000
2	Ջրի շապիկի օղ	40843	լրկզմ	4000
3	Կափույրի կափարիչի ներդիր	700-40-2896	հատ	3000
4	Մանժետ 1,2-200x240-1 Բ-10	ԳՕՍՏ 8752-79	հատ	5000
5	Գլդոն երկկողապատ	24-21-170ՍՊ	հատ	190000
6	Օժանդակիչ գլդոն Բ-10	50-21-416ՍՊ	հատ	180000
7	Օժանդակիչ գլդոն S-130	24-21-171ՍՊ	հատ	127000
8	Բոցամուղ	14-69-117-ՍՊ	հատ	23000
9	Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի) մետաղական	16121	հատ	6000
10	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	2224ԿՄ	հատ	31000
11	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	228Ա	հատ	44000
12	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	70-42314	հատ	21000
13	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	70-32417	հատ	19000
14	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	70-32612	հատ	18000
15	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	118	հատ	8000
16	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	70-32315	հատ	15000
17	Դանակի հեղույս և մանեկ	Մ27	լրկզմ	1000
18	Գործարկիչ շարժիչ	ՊԴ-23	հատ	2590000
19	Կարգավորատոր Կ-125լ	Կ-125	հատ	56000
20	Շղթայակցման կցորդիչ ՊԴ-23	17-73-54	հատ	20000
21	Ռադիատորի կարճախողովակ	42701	լրկզմ	10000
22	Փոխանցումների փոխարկման երկժանի (դարձիչ)	50-12-565	հատ	59000
23	Դարձիչի մատ	50-12-581	հատ	45000
24	Մագնետտո Մ-149	372800	հատ	65000
25	Փոկ հովհարի	11x16x1650	հատ	4000
26	Փոկ գեներատորի	11x12.5x1090	հատ	1000
27	Գլանների բլոկի գլխիկ	51-02-3ՍՊ	հատ	505000
28	ՊԴ-23-ի գլանների բլոկի գլխիկ	2240-1	հատ	50000
29	Երկժանանիվ	20-19-24ՍԲ	հատ	119000
30	Տանող անիվի գամասեղների հավաքակազմ	24-19-22	լրկզմ	10000
31	Տարվող կցորդիչի սկավառակ S-130	18-14-135ՍՊ	հատ	30000
32	Տանող անիվ Բ-10	50-19-160ՍՊ	լրկզմ	233000
33	Տանող անիվ S-130	50-19-99ՍՊ	լրկզմ	204000
34	Ձգիչ անիվ S-130	50-21-305-05ՍՊ	լրկզմ	503000
35	Փոխանցման տուփի վերևի լիսերի հավաքակազմ	50-12-246ՍՊ	լրկզմ	249000
36	Փոխանցման տուփի ներքևի լիսերի հավաքակազմ	50-12-297ՍՊ	լրկզմ	174000

37	Հարթաշերեփի շեղածման հիդրոգլանի նորոգման լրակազմ	50-50-226	լրկզմ	10000
38	Փխրեցուցիչի հիդրոգլանի նորոգման լրակազմ	50-50-225	լրկզմ	10000
39	Թրթուր	50-22-2	հատ	33000
40	Թրթուրի հավաքակազմ (աջ , ձախ)	50-22-9ՍՊ	լրկզմ	2220000
41	Ռադիատորի հավաքակազմ	Դ180-1301010	հատ	665000
42	Մղանի հարթաշերեփ	80-52-19ՍՊ	հատ	1700000
43	Յուղի պոմպ	29-09-124ՍՊ	հատ	140000
44	Բարձր ճնշման վառելիքի պոմպի կարգավորիչ	51-06-14ՍՊ	լրկզմ	310000
45	Մեկնարկիչ 42.3708.000	42.3708.000	հատ	63000
46	Գլդոն միակողապատ	24-21-169ՍՊ	հատ	196000
47	Գլանների գլխիկի միջադիր	51-02-107ՍՊ	հատ	6000
48	Թրթուրի հեղյուս և մանեկ	Մ20x1,5x62/30326-1	լրկզմ	1000
49	Կողային դանակ	80-52-111-02	հատ	36000
50	Միջնամասի դանակ	70-52-13	հատ	135000
51	Ներդրակ արմատական	Ա-23.01-103.160ՍԲ	Լրկզմ	30000
52	Ներդրակ շարժաթևի	Ա-23.01-103.160ՍԲ	Լրկզմ	30000
53	Ներդրակ շարժաթևի ՊԴ-23	Ա23,01-54,130ՍԲ	Լրկզմ	12000
54	Ջրի շապիկի խողովակ	2218	հատ	1000
55	Սկավառակ ՊԴ-23	738-4	հատ	7000
56	Վառելանութի զտիչ տարր S-130, Բ-10	51-70-146ՍՊ	հատ	2000
57	Տուրբոճնշակ ՏԿՐ 8.5Ս3	51-54-10ՍՊ	հատ	233000
58	Փոխանցման տուփի նորոգման լրակազմ ԿՊՊ S-130	1303	հատ	290000
59	Փխրեցուցիչի կանգնակ	50-50-104ՍՊ	Լրկզմ	360000
60	Օդի զտիչ տարր	ԴՏ 75-1109560	հատ	7000
61	Ջրահովացուցիչի հավաքակազմ	130Ս.13.010-1S	հատ	580000
62	Տանող անիվ սեգմենտով S170,Բ10	50-19-182 ՍՊ	հատ	353000
63	Անվակունդ	50-19-145ՍՊ	հատ	445000
64	Տանող անիվի հեղյուս և մանեկ	Մ20x1,5-62	հատ	2000
65	Կողային պտուկտափոխանցիչի պատյան ձախ S170	24-19-35	հատ	455000
66	Կողային պտուկտափոխանցիչի պատյան աջ S170	24-19-36	հատ	455000
67	Կողային պտուկտափոխանցիչի պատյան ձախ Բ10	50-19-141	հատ	250000
68	Կողային պտուկտափոխանցիչի պատյան աջ Բ10	50-19-142	հատ	250000
69	Կարտեր առջևի S170,Բ10	51-01-156ՍՊ	հատ	300000
70	Կարտեր հետևի S170,Բ10	51-01-105ՍՊ	հատ	270000
	Ընդամենը՝ 15 480 000			

Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ Բ-10, S-170, 130) առավելագույն գինը կազմում է 38 400 000 ՀՀ դրամ:

Հ/հ	Անվանումը	*Կատալոգային համար*	*Չափի միավորը*	*Միավորի գներ*
	2. Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ "ԿԱՄԱԶՈ Դ 355")			
1	Օդի զտիչի տարր	6128-81-7042	լրկզմ	95000
2	Վառելիքի զտիչ	600-311-8281	հատ	21000
3	Տուրբաճնշակ	6502-12-9004	լրկզմ	1395000
4	Գլանների գլխիկ	6128-11-1012	լրկզմ	4025000
5	Գլանի խցիչ	6127-21-2251	լրկզմ	65000
6	Գլդոն երկկողապատ	195-30-00453	հատ	740000
7	Գլդոն միակողապատ	195-30-00440	հատ	730000
8	Օժանդակիչ գլդոն	195-30-00106	հատ	370000
9	Հարթաշերեփի բարձրացման հիդրոգլան	195-63-13700	հատ	4200000
10	Սեգմենտի հեղույս և մանեկ	195-27-12632	լրկզմ	8000

11	Ձգիչ անիվ	195-30-00283	հատ	3590000
12	Ձգիչ անիվի նորոգման լրակազմ	195-30-13251	լրկզմ	2325000
13	Թրթռուրի ծգման մեխանիզմ	195-30-14170	հատ	710000
14	Արգելակման թմբուկ	195-22-11114	հատ	2850000
15	Ջրի պոմպ	6127-61-1008	հատ	720000
16	Ընդհանուր ականատ	195-32-21141	հատ	65000
17	Բույթ ընդհանուր	195-32-21151	հատ	30000
18	Բույթ հիմնական	195-32-31390	հատ	65000
19	Թրթռուրի օղակ	195-32-11127/37	լրկզմ	145000
20	Ձգափոկ հավաքական	195-71-00094	հատ	1690000
21	Տանող համակարգ	195-27-11237	հատ	4335000
22	Գլխավոր ականատ	195-32-31380	հատ	45000
23	Հարթաշերեփի դանակի հեղույս և մանեկ	195-71-11451/25	լրկզմ	8000
24	Հարթաշերեփի կողային դանակ	195-71-11173/83	հատ	265000
25	Հիդրավլիքի զտիչ	175-60-27380	հատ	25000
26	Ձգիչ անիվի լիսեռ	195-30-13251	հատ	260000
27	Յուղի զտիչ	600-211-1230	հատ	37000
28	Յուղի զտիչ	3313283	հատ	26000
29	Ներդրակ արմատական	6127-21-8071	լրկզմ	370000
30	Ներդրակ շարժաթևի	6127-31-3042	լրկզմ	370000
	Ընդամենը՝ 29 580 000			

Ձանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ "ԿԱՄԱԶՈ Դ 355") առավելագույն գինը կազմում է 6 100 000 ՀՀ դրամ:

Հ/հ	Անվանումը	*Կատալոգային համար*	*Չափի միավորը*	*Միավորի գներ*
	3.Ձանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ ՇԱՆՏՈՒԻ ՍԴ 42-3)			
1	Թագագլխիկի մատ	175-78-21740	հատ	12000
2	Երկկողապատ գլդոն	31Ի-40-22000	հատ	810000
3	Միակողապատ գլդոն	31Ի-40-21000	հատ	725000
4	Հիդրավլիքի զտիչ	Պ175-60-27380	հատ	26000
5	Տրանսմիսիայի զտիչ	175-49-11580	հատ	15000
6	Վառելիքի զտիչ	6.126E+11	հատ	21000
7	Օ-օղ	195-27-12210	հատ	21000
8	Շարժիչի վերևի միջադիրների հավաքակազմ	3800728	լրկզմ	460000
9	Շարժիչի ներքևի միջադիրների հավաքակազմ	4089391	լրկզմ	460000
10	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	3088298	հատ	14000
11	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	3081489	հատ	7000
12	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	3011076	հատ	7000
13	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	3014668	հատ	13000
14	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	4000504	հատ	7000
15	Մխոցի օղերի լրակազմ	4955975	լրկզմ	90000
16	Շարժաթևի ներդրակներ	205840	լրկզմ	310000
17	Արմատական ներդրակների հավաքակազմ	AR12271	լրկզմ	650000
18	Ծնկաձև լիսեռի խցուկ	3648161	հատ	124000
19	Ծնկաձև լիսեռի խցուկ	3005886	հատ	115000
20	Շարժաթև	3811994	հատ	640000
21	Ծնկաձև լիսեռ	3347569	հատ	5300000
22	Բլոկ ցիլինդրա	3088301	հատ	9600000
23	Գոլովկա բլոկա	3176619	հատ	970000
24	Բոցամուղ	3016676	հատ	745000
25	Տուրբոկոմպրեսսոր	3803452	հատ	1645000
	Ընդամենը՝ 22 787 000			

Ձանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ ՇԱՆՏՈՒԻ ՍԴ 42-3) առավելագույն գինը կազմում է 14 500 000 ՀՀ դրամ:

Հ/հ	Անվանումը	Կատալոգային համար	Չափի միավորը	Միավորի գներ
	4.Զանազան պահեստամասեր (ՇԱՐԺԻՉ ՏՄՁ 8486.10-02)			
1	Օդի զտիչի տարր	6510-1109080	հատ	15000
2	Վառելիքի զտիչի տարր	840.1117040-01	հատ	1000
3	Յուղի զտիչի տարր	840.1012040-14	հատ	3000
4	Շարժաթև	8401100405	հատ	174000
5	Ներդրակ արմատական	840100517	լրկզմ	46000
6	Ներդրակ շարժաթևի	8401004058	լրկզմ	46000
7	Մեկնարկիչ	2501.3708-21	հատ	238000
8	Հրիչի ծող	840.1007 174-02	հատ	64000
9	Ծնկաձև լիսեռի վերևի հենակի տափօղակ	8401005193	հատ	5000
10	Ծնկաձև լիսեռի ներքևի հենակի տափօղակ	840.1005194-10	հատ	5000
11	Բաշխիչ լիսեռ	8461006015	հատ	505000
12	Գլանների գլխիկի միջադիր	840.1003213-02	հատ	2000
13	Կարտերի միջադիր	8421009072	հատ	8000
14	Վառելիքի ներցայտման առաջանցման կցորդիչ	842.1121010-10	հատ	440000
15	Շարժիչ	8486.10-02	լրկզմ	14700000
16	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	171-20	հատ	1245000
17	Փոկ I-11x21-1950	11-21-14-1950	հատ	15000
	Ընդամենը՝ 17 512 000			

Զանազան պահեստամասեր (ՇԱՐԺԻՉ ՏՄՁ 8486.10-02) առավելագույն գինը կազմում է 5 100 000 ՀՀ դրամ:

Հ/հ	Անվանումը	Կատալոգային համար	Չափի միավորը	Միավորի գներ
	5.Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ ԴՏ-75)			
1	Գլանի խցիչ Ա-41	արտ. 406	լրկզմ	5000
2	Ներդրակ արմատական Ա-41	Ա23.01-98-20	լրկզմ	13000
3	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	Ա-41/Ա01	հատ	380000
4	Վառելիքի մղման պոմպ	16-Ա30-8Ա-01	հատ	15000
5	Փոշարար	11ՏԱ-20ա 2-02	հատ	3000
6	Գործարկիչ շարժիչ ՊԴ-10	Դ24 Ա01-4	լրկզմ	200000
7	Մեկնարկիչ ՊԴ-10-ի	Ստ362-3708000	հատ	45000
8	Ռադիատորի կարճախողովակ	ԴՏ75, Ա41	լրկզմ	10000
9	Հարթաշերեփի դանակ	150x16x18	լրկզմ	95000
10	Թրթուրի մատ	Ա34-2-019	հատ	2000
11	Թրթուրի օղակ	77. 34. 501	հատ	15000
12	Կողային պտտվոտափոխանցիչի նորոգման լրակազմ	79.39.040Ռ	լրկզմ	72000
13	Առանցքակալ 7311Կ	ԳՕՍՏ 333-79	հատ	10000
14	Առանցքակալ 7313Կ	ԳՕՍՏ 333-79	հատ	12000
15	Առանցքակալ 7909Կ1	ԳՕՍՏ 333-79	հատ	21000
16	Ակ առջևի	85.33.002Ա	հատ	42000
17	Գդոն հենակ	54.31-021Ի	հատ	39000
18	Գդոնի առանցք	85.31119Ա-01	հատ	75000
19	Հիդրոգլանի նորոգման լրակազմ	ՑՍ - 75	լրկզմ	8000
20	Հիդրոգլանի նորոգման լրակազմ	ՑՍ - 110	լրկզմ	10000
21	Տանող անիվ	77.39.132	հատ	75000
22	Տանող անիվի լիսեռ	77.39.012Ա	հատ	265000
23	ՈՒղղորդող անիվ աջ հավաքակազմ	85.32.001	հատ	75000
24	ՈՒղղորդող անիվ ձախ հավաքակազմ	85.32.002	հատ	75000
25	Օդի զտիչ տարր	ԴՏ 75	հատ	7000

26	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ	162.39.103-02	հատ	145000
27	Ռադիատորի միջուկ ԴՏ-75	85ռ.1301020	հատ	220000
	Ընդամենը՝ 1 934 000			

Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ ԴՏ-75) առավելագույն գինը կազմում է 12 000 000 ՀՀ դրամ:

Ապրանքների մատակարարումը 2018թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշքան 01.12.2018թ., ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված հայտերի:

Ծանոթություն

- Ցանկում նշված պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված,
- ձեռք բերվող պահեստամասերի քանակները կկանոնակարգվեն ՀՀ ՀՈՒ ԻԶՎ կողմից տրվող հայտերով, որոնք մատակարարի կողմից համաձայն հայտերի կտրամադրվեն պահանջ ներկայացնելուց 20-օրյա ժամկետում,
- պահեստամասերը ըստ իրենց տեխնիկական պայմանների պետք է ունենան համապատասխան գործարանային փաթեթավորում,

Պահեստամասերը պետք է հանձնվեն ԻԶՎ կենտրոնական պահեստ, որը գտնվում է ք. Էջմիածին Իսի-Լե-Մուլինոյի փողոց 7: Բոլոր պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ/ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՊԱՊ ԵՎ ԹՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

Տնօրեն

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 2
N ՀԲՄԱՊՁԲ-4/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Առավելագույն գին	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ.
1	Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ Բ-10, S-170, 130)	38400000	19200000	30720000	30720000	30720000	38400000	38400000	38400000
2	Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ "ԿԱՄԱԶՈ Դ 355")	6100000	3050000	4880000	4880000	4880000	6100000	6100000	6100000
3	Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ ՇԱՆՏՈՒԻ ՍԴ 42-3)	14500000	7250000	11600000	11600000	11600000	14500000	14500000	14500000
4	Զանազան պահեստամասեր (ՇԱՐԺԻՉ ՏՄՁ 8486.10-02)	5100000	2550000	4080000	4080000	4080000	5100000	5100000	5100000
5	Զանազան պահեստամասեր (ԲՈՒԼԴՈԶԵՐ ԴՏ-75)	12000000	6000000	9600000	9600000	9600000	12000000	12000000	12000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:* CPV կոդը՝ 34911150/4/15/1

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՅՈՒԹԱՅԻՆ ԴԵՊՈՒՏԱՏԵՍՏԻՄԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՊԱՊ ԵՎ ԹՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

Տնօրեն

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ.Հ. Հ. Գրիգորյան
АК 0457549

Հավելված N 3
N ՀԲՄԱՊՁԲ-4/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրվագ գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀԲՄԱՊՁԲ-4/1-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն